ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԳՀԾՁԲ-17/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ հակավիրուսային համակարգչային ծրագրի արտոնագրի երկարացման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 05.06.2017թ. N 55/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 14.06.2017թ. ժամը 11-00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գալստյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Զ.Աղաջանյանը, Լ.Մարկոսյանը, Ա.Միսակյանը, Ս.Բեժանովը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Գալստյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-17/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «Այ-Թի Պլազա» ՍՊԸ-ն (ք. Երևան, Արտաշիսյան 62շ բն 26)
2. «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ն (ք. Երևան, Մաշտոցի պող. 2 տ.60)
3. «Նետքոր» ՍՊԸ-ն (ք. Երևան, Դավիթաշեն 3 Թաղամաս 40)
4. «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ն (ք. Երևան, Զարյան 22Ա)
5. «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ն (ք. Երևան, Բաբաջանյան 163 13)
6. «Միկրորինգ» ՍՊԸ-ն (ք. Երևան, Սայաթ-Նովայի փ. 33/63)

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

«Այ-Թի Պլազա» ՍՊԸ-ի, «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի, «Նետքոր» ՍՊԸ-ի, «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ի, «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ի և «Միկրորինգ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերը էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից դիտվել է որպես (պիտանի) հայտեր:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

1.«Այ-Թի Պլազա» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն վճարման պահանջագրի ներկայացման ամսաթվի դիմաց նշված է ամսաթիվ, որը լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը, ինչպես նաև գնային առաջարկի արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ԱԱՀ-ն սյունակներում առաջարկվող գինը նշված չէ տառերով:

2. «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն բացակայում է հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնագիրը (ֆայլը կցված չէ):

3. «Նետքոր» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն մասնակցի կողմից փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես

նաև վճարման պահանջագրի ներկայացման ամսաթվի դիմաց նշված է ամսաթիվ, որը լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը և հայտի ապահովման չափը հավասար չէ հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

4. «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն գնային առաջարկի արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) սյունակում առաջարկվող գինը նշված չէ տառերով, իսկ հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ և արտատպելուց հետո փաստաթղթում տեսանելի չէ նույնականացման քարտի տվյալները, ինչպես նաև գնային առաջարկի ձևը չի համապատասխանում հրավերով սահմանված ձևին:

5. «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն հայտի ապահովման չափը հավասար չէ հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

6. «Միկրորինգ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն վճարման պահանջագրի համարակալման դիմաց նշված է ծածկագրի համարը, սակայն դա լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս, իսկ հայտի ապահովման վճարման պահաջագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ և արտատպելուց հետո փաստաթղթում տեսանելի չէ նույնականացման քարտի տվյալները:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ծառայության անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ						Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ					
		«Այ-Թի Ղլազա» ՍՊԸ	«Նորմա-պլյուս» ՍՊԸ	«Նետքոր» ՍՊԸ	«Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ	«ԼանԱր Սերվիս» ՍՊԸ	«Միկրորինգ» ՍՊԸ	«Այ-Թի Ղլազա» ՍՊԸ	«Նորմա-պլյուս» ՍՊԸ	«Նետքոր» ՍՊԸ	«Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ	«ԼանԱր Սերվիս» ՍՊԸ	«Միկրորինգ» ՍՊԸ
1	Հակավիրուսային համակարգչային ծրագրի արտոնագրի երկարացման ծառայություններ	6393920	6371300	6371300	6371300	6371300	6371300	7672704	7645560	7645560	7645560	7645560	7645560

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշման 41-րդ կետը՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին

էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

-գնահատող հանձնաժողովը որոշեց՝

«Այ-Թի Պլազա» ՍՊԸ-ի, «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի, «Նետքոր» ՍՊԸ-ի, «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ի, «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ի և «Միկրորինգ» ՍՊԸ-ի հայտերը մերժել՝ քանի որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-17/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգը ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գալստյան

Անդամներ՝ Զ.Աղաջանյան

Լ.Մարկոսյան

Ա.Միսակյան

Ս.Բեժանով

Քարտուղար՝ Գ.Ղազարյան